



CALIFORNIA DEPARTMENT OF EDUCATION  
CELDT Test Results Interpretation Guide for Kindergarten and Grade One  
(August 2011)  
T10-335 Western Armenian, Sylfaen Font

***[NOTE TO LOCAL EDUCATIONAL AGENCIES (LEAs): As a form of assistance to LEAs, the California Department of Education (CDE) offers this translation free of charge. Because there can be variations in translation, the CDE recommends that LEAs confer with local translators to determine any need for additions or modifications, including the addition of local contact information or local data, or modifications in language to suit the needs of specific language groups in the local community. If you have comments or questions regarding the translation, please e-mail the Clearinghouse for Multilingual Documents (CMD) at [cmd@cde.ca.gov](mailto:cmd@cde.ca.gov).]***

**DELETE THIS COVER PAGE BEFORE USING THE  
TRANSLATION WHICH FOLLOWS BELOW.**



**Գալիֆորնիոյ  
Անգլերէն  
Լեզուի  
Զարգացման  
Քննութիւն**

**2011–12-ի Թողարկում  
ՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՐԴԻՒՆՔՆԵՐՈՒ  
ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ՈՒՂԵՑՈՅՑ  
ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶԻ ԵՒ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ**

Այս ուղեցոյցը նախատեսուած է օգնելու ծնողներուն՝ հասկնալու *Գալիֆորնիոյ Անգլերէն Լեզուի Զարգացման Քննութեան Աշակերտի Յառաջդիմութեան Մակարդակի Հաշուետուութեան (California English Language Development Test (CELDT) Student Performance Level Report)* պարունակող տեղեկութիւնը:

### **Քննութեան նպատակը**

Նահանգային (Կրթութեան մասին Օրէնսգիրք, 313 և 60810 բաժին) եւ դաշնակցային օրէնքները (Նախակրթարանի և միջնակարգ կրթութեան մասին օրէնքի 3-րդ վերնագիրը) կը պահանջեն, որ դպրոցները կատարեն անգլերէն լեզուի հմտութեան քննութիւն՝ (1) նոր ընդունուած աշակերտներուն համար, որոնց հիմնական լեզուն անգլերէնը չէ, եւ (2) այն աշակերտներուն համար, որոնք անգլերէն կը սորվին: Գալիֆորնիոյ հանրային դպրոցներու համար այս քննութիւնը CELDT-ն է: CELDT-ը ունի երեք նպատակ՝

- գտնել այն աշակերտները, որոնք անգլերէնի սահմանափակ կարողութիւն ունին (լիովին սահուն չեն տիրապետեր անգլերէնին)
- որոշել անգլերէն լեզուի սահմանափակ կարողութիւն ունեցող աշակերտներու անգլերէնի մակարդակը
- գնահատել անգլերէն լեզուի սահմանափակ կարողութիւն ունեցող աշակերտներու յառաջընթացքը, երբ անոնք ձեռք բերեն անգլերէն լսելու, կարդալու, խօսելու եւ գրելու կարողութիւն

### **Քննութեան ձեւաչափը**

CELDT-ը հիմնուած է Գալիֆորնիոյ անգլերէն լեզուի զարգացման չափանիշներուն վրայ (California English-language development standards), որոնք հասանելի են Գալիֆորնիոյ Կրթութեան Բաժինի (California Department of Education, CDE) կայքէջին՝

<http://www.cde.ca.gov/be/st/ss/documents/englangdevstnd.pdf> հասցեով եւ սպաներէն լեզուով՝

<http://www.cde.ca.gov/be/st/ss/documents/eldspan.pdf> հասցեով:

CELDT-ը կ'որոշէ աշակերտի անգլերէն լեզուի կարողութիւնը հետեւեալ բաժիններուն մէջ՝ լսելու, խօսելու, կարդալու եւ գրելու:

**Լսելու** բաժինը կ'որոշէ, թէ աշակերտը ինչքանով կրնայ հասկնալ անգլերէն լեզուով տրուած տեղեկութիւնը: Աշակերտներէն կը պահանջուի հետեւիլ բանաւոր հրահանգներուն եւ ցոյց տալ քննողի կողմէ կարդացուած տեղեկութեան եւ պատմութիւններու հասկցուած ըլլալը: Մանկապարտէզէն մինչեւ երկրորդ դասարան աշակերտներէն նաեւ կը խնդրուի արտասանել բառեր, որոնք համահունչ են քննիչի կողմէ տրուած բառերուն:

**Խօսելու** բաժինը կ'որոշէ, թէ աշակերտը որքանով կրնայ միտքեր արտայայտել եւ բանաւոր հարցերու պատասխանել անգլերէնով: Աշակերտներէն կը պահանջուի անուանել առարկաներն ու անոնց գործածութիւնը, բանաւոր հարցերու պատասխանել եւ նկարներու հիմամբ պատմութիւններ պատմել:

**Կարդալու** բաժինը կ'որոշէ, թէ աշակերտը որքանով կրնայ անգլերէն կարդալ: Մանկապարտէզի եւ


առաջին դասարանի (K-1) աշակերտներին կը պահանջուի ցոյց տալ գիրքի մասերը, տառերը, արտասանել հնչիւնները, ինչպէս նաեւ կարդալ պարզ բառեր եւ նախադասութիւններ: Երկրորդին տասներկրորդ դասարանի աշակերտներին կը պահանջուի ընտրել բառեր՝ նախադասութիւնը ամբողջացնելու համար, ցուցադրել դասարանի մակարդակին համապատասխան բառապաշար եւ բառակազմական կանոններ, ինչպէս նաեւ կարդալու ըմբռնման կարողութիւն ցուցադրել:

**Գրելու** բաժինը կ'որոշէ, թէ աշակերտը որքանով կրնայ անգլերէն գրել: K-1-ի աշակերտներին կը պահանջուի ընդօրինակել տառերն ու բառերը, գրել պարզ բառեր՝ հիմնուելով քննիչի կողմէ կարդացուած պատմութեան վրայ, եւ ճանչնալ հիմնական կէտադրութիւնն ու գլխագիրներով գրելը, որոնք անհրաժեշտ են կարճ նախադասութեան համար: 2-12-րդ դասարաններու աշակերտներին կը պահանջուի ցուցադրել քերականութեան, նախադասութիւններ կազմելու եւ կարճ շարադրութիւններ գրելու կարողութիւն:

CELDT քննութիւններու հարցումներու օրինակները (անգլերէնով) կրնաք գտնել *«Հրապարակուած քննութիւններու հարցեր»* փաստաթուղթին մէջ, որ հասանելի է CDE-ի կայքէջին՝ <http://www.cde.ca.gov/ta/tg/el/documents/celdtrtqs0111.pdf> հասցեով:

# Մեկնաբանել Աշակերտի Յառաջդիմութեան Մակարդակի հաշուետուութիւնը

Ստորեւ ներկայացուած է *CELDT Աշակերտի Յառաջդիմութեան Մակարդակի հաշուետուութեան* օրինակ մը: Ան ցոյց կու տայ աշակերտի ստացած նիշերն ու կատարման մակարդակը՝ իւրաքանչիւր բաժնի մէջ եւ ընդհանուր առմամբ: K-1-ի համար, ստացած նիշերու Ընդհանուր թիւը կը հաշուարկուի որպէս՝ 45% Լսել, 45% Խոսիլ, 5% Կարդալ եւ 5% Գրել: 2-12-րդ դասարաններու համար նիշերու Ընդհանուր թիւը չորս բաժիններէն ստացուած նիշերու միջինն է: Իւրաքանչիւր բաժինէն ստացած նիշն ու Ընդհանուր նիշը կը դասակարգուին կատարման հինգ մակարդակներէն մէկուն մէջ՝ Սկսնակ, Վաղ Միջին Մակարդակ, Միջին Մակարդակ, Վաղ Բարձր Մակարդակ եւ Բարձր Մակարդակ: Ընդհանուր կատարման մակարդակներու նկարագրութիւնները կցուած են: Ի յաւելումն, կը տրամադրուի նաեւ ըմբռնման ստացած նիշերը (Լսելու եւ Կարդալու բաժիններէն ստացած նիշերու միջինը):



## Ձեռակերպում՝

- Ա. (A) Աշակերտի անունը (մականուն, անուն) եւ ծնողքի/խնամակալի փոստային հասցէն
- Բ. (B) Աշակերտի անունը եւ դասարանը
- Գ. (C) Քննութեան նպատակը եւ թուականը
- Դ. (D) Աշակերտի ծննդեան թուականը, հիմնական լեզուն, նահանգային եւ տեղական ID թիւերը
- Ե. (E) Դպրոցը եւ շրջանը, ուր տեղի ունեցած է քննութիւնը
- Զ. (F) Ընդհանուր եւ գնահատուած բաժինները՝ իւրաքանչիւրը չափման հնարաւոր նիշերով

- Է. (G) Կատարման Մակարդակները (Բարձր մակարդակ, Վաղ բարձր մակարդակ, Միջին, Վաղ միջին եւ Սկսնակ)
- Ը. (H) Կողագիծերը եւ չափման նիշերը, որոնք ցոյց կու տան աշակերտի կատարման մակարդակը՝ իւրաքանչիւր բաժնի համար եւ ընդհանուր առմամբ
- Թ. (I) Ընթրնելու ստացած նիշերը
- Ժ. (J) Ինչպէս կարդալ այս հաշուետուութիւնը

*Աշակերտի Յառաջդիմության Հաշուետվության մէջ* կողագիծերու բարձրութիւնը ցոյց կու տայ աշակերտի կատարումը: Առաջին կողագիծը ցոյց կու տայ Ընդհանուր կատարման մակարդակը, իսկ միւս կողագիծերը ցոյց կու տան իւրաքանչիւր բաժինի կատարման մակարդակը:

CELDT ստացած նիշերը կ'օգնեն դպրոցին որոշելու դասարանին մէջ տրուող հրահանգներու տեսակները, գորս աշակերտը պէտք է ստանայ: Դպրոցը նաեւ կ'օգտագործէ այլ քննութիւններու ստացած նիշերը, ուսուցիչի գնահատումը եւ ծնողներու հետ կատարուած խորհրդակցութիւնները՝ այդ որոշումները կայացնելու համար: CELDT-ի մէջ յառաջընթացք արձանագրելու համար պէտք է ջանալ յաղթահարել բոլոր բաժինները: Այս նպատակին հասնելու համար աշակերտին տրուող աջակցութեան վերաբերեալ տեղեկութիւնը կարելի է ձեռք բերել դպրոցէն:

Եթէ քննութեան ձեւափոխում կամ այլընտրանքային գնահատում օգտագործուած է մէկ կամ քանի մը բաժիններու համար, ապա տուեալ բաժինը(ները) կը նշուին աստղանիշով (\*) եւ հաշուետուութիւնը կ'ունենայ տողատակի հետեւեալ ծանօթագրութիւնը՝

\* Քննութեան ձեւափոխում կամ այլընտրանքային գնահատում կատարուած է սոյն բաժինին մէջ: Ձեւափոխութիւնները կամ այլընտրանքային գնահատումը կը վերափոխեն այն, ինչը CELDT-ը նպատակ ունի որոշել, ուստի աշակերտը կը ստանայ հասանելի ամենացած նիշերը (LOSS): Քանի որ LOSS-ը կը նուազեցնէ ստացած Ընդհանուր նիշերու թիւը, ուստի արդիւնքները մեկնաբանելու ժամանակ պէտք է շրջահայեաց ըլլալ:

Եթէ քննութեան յանձնման ժամանակ խախտում յառաջանայ, ապա տուեալ բաժին(ներ)ը կը նշուին «^» նշանով եւ հաշուետուութիւնը կ'ունենայ տողատակի հետեւեալ ծանօթագրութիւնը՝

^ Սոյն բաժինի կատարման ժամանակ քննութեան խախտում տեղի ունեցած է: Յաւելեալ տեղեկութիւն կարելի է ստանալ դպրոցէն:

CELDT Քննութեան Կատարման Ընդհանուր Նկարագիրները, յաջորդ էջին մէջ, կը բացատրեն, թէ աշակերտները ընդհանրապէս ինչ գիտեն եւ կրնան ընել անգլերէն լեզուի իւրաքանչիւր բաժինին մէջ: Իւրաքանչիւր բաժինի Քննութեան Կատարման Նկարագիրները անգլերէն լեզուով կը տրամադրուին *Աշակերտի Յառաջդիմության Մակարդակի Հաշուետուութեան* ետեւի էջին մէջ:

### **Յաւելեալ տեղեկութիւն CELDT-ի վերաբերեալ**

CELDT-ի վերաբերեալ յաւելեալ տեղեկութիւն կարելի է ստանալ CDE կայքէջէն՝ <http://www.cde.ca.gov/ta/tg/el/> հասցէներով:

# CELDT Քննութեան Կատարման Ընդհանուր Նկարագիրները Մանկապարտեզ եւ Առաջին դասարան

## Բարձր Մակարդակ

Անգլերէն լեզուի յառաջդիմութեան այս մակարդակը ունեցող աշակերտները գործնականին մէջ կը հաղորդակցին տարբեր լսարաններու հետ՝ ծանօթ եւ նոր թեմաներու լայն շրջանակներու մէջ, բաւարարելով հասարակական եւ ուսումնական պահանջները: Որպէսզի ձեռք բերեն իրենց հասակակից բնիկ անգլիախօս ընկերներու՝ անգլերէն լեզուի կատարելութեան մակարդակը, հետագային դեռեւս լեզուագիտական հօգրացման եւ կատարելագործման կարիք կ'ըլլայ: Անոնք կրնան բանաւոր կերպով ճանչնալ եւ ամփոփել ճշգրիտ մանրամասնութիւններ եւ վերացական հասկացողութիւններ՝ ուսումնական բոլոր բաժիններու մեծ մասի չձեւափոխուած հրահանգներուն մէջ: Գրաւոր աշխատանքը ցոյց կու տայ դասարանին համապատասխան գրաւոր շարադրանքը: Միալները հազուադէպ են եւ չեն դժուարացներ հաղորդակցութիւնը:

## Վաղ Բարձր Մակարդակ

Անգլերէն լեզուի յառաջդիմութեան այս մակարդակը ունեցող աշակերտները կը սկսին համակցել անգլերէն լեզուի տարբերը՝ բարդ, ճանաչողական հմտութիւն պահանջող իրավիճակներու մէջ եւ կը կարողանան օգտագործել անգլերէնը որպէս ուսումնական բաժիններու մէջ սորվելու միջոց: Անոնք կը կարողանան ճանչնալ եւ ամփոփել ճշգրիտ մանրամասնութիւններ եւ վերացական հասկացողութիւններ՝ ուսումնական բաժիններու մեծ մասի չձեւափոխուած հրահանգներուն մէջ: Բանաւոր աշխատանքը կը նկարագրուի աւելի մանրամասն շարադրանքով եւ գրաւոր աշխատանքը կ'ընդգրկէ պարզ նախադասութիւններ՝ յաճախ օգտագործելով երկվանկ բառեր: Միալները աւելի քիչ յաճախականութեամբ կ'ըլլան եւ հազուադէպօրէն կը բարդացնեն հաղորդակցութիւնը:

## Միջին

Անգլերէն լեզուի յառաջդիմութեան այս մակարդակը ունեցող աշակերտները կը սկսին աճող ճշգրտութեամբ ձեւափոխել անգլերէն լեզուի կարողութիւնը՝ բաւարարելու հաղորդակցութիւնը եւ ուսման պահանջները: Անոնք կրնան ճանչնալ եւ հասկնալ աւելի ճշգրիտ մանրամասներ եւ քանի մը վերացական հասկացողութիւններ՝ չձեւափոխուած հրահանգներու ժամանակ: Անոնք կրնան պատասխանել եւ բանաւոր կերպով արտայայտել իրենց միտքերը՝ զարգացող հանգստութեամբ, դէպի աւելի տարբեր հաղորդակցման միջոցներ եւ ուսման պահանջներ՝ աւելի նուազ սխալներով: Գրաւոր աշխատանքը սովորաբար կ'ընդարձակուի սովորական արտայայտութիւններով եւ միավանկ բառերով: Միալները դեռ կը բարդացնեն հաղորդակցութիւնը:

## Վաղ Միջին

Անգլերէն լեզուի յառաջդիմութեան այս մակարդակը ունեցող աշակերտները կը շարունակեն զարգացնել անգլերէնի ընկալունակ եւ արդիւնաւետ կարողութիւններ: Անոնք կը կարենան ճանչնալ եւ հասկնալ աւելի ճշգրիտ մանրամասներ՝ չձեւափոխուած հրահանգներու ժամանակ: Անոնք կրնան ի վիճակի ըլլալ հեշտութեամբ արձագանքելու տարբեր հաղորդակցման միջոցներու եւ ուսման պահանջներու՝ աւելի քիչ սխալներով: Բանաւոր աշխատանքը ընդհանրապէս կը սահմանափակուի արտայայտութիւններով եւ գոց սորված արտայայտութիւններով ու հարցերով: Գրաւոր աշխատանքը կը սահմանափակուի տառերով եւ յաճախ՝ միավանկ բառերով: Յաճախակի սխալները կը շարունակեն նուազեցնել հաղորդակցութիւնը:

## Սկսնակ

Անգլերէն լեզուի յառաջդիմութեան այս մակարդակը ունեցող աշակերտները կրնան ցոյց տալ անգլերէն լեզուի ընկալունակ եւ արդիւնաւետ քիչ կամ ոչ մէկ կարողութիւն: Անոնք կը սկսին հասկնալ քանի մը

Ճշգրիտ մանրամասնություններ չփոխուած հրահանգներու ժամանակ: Անոնք կրնան ի վիճակի ըլլալ պատասխանելու հաղորդակցման կամ ուսման քանի մը պահանջներու, բայց շատ սխալներով: Բանաւոր խօսքը ընդհանրապէս կը սահմանափակուի չկապակցուած բառերով եւ գոց սորված արտայայտություններով ու հարցերով: Գրաւոր աշխատանքը անհասկնալի է կամ սահմանափակուած է քանի մը սովորաբար օգտագործուող տառերու: Յաճախակի սխալները կը դժուարացնեն հաղորդակցութիւնը: